ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆԸ «ԱԳՐԻՄԱՏԿՈ ԱՐՄԵՆԻԱ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԲՈՒՅՍԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՔԻՄԻԱԿԱՆ ԵՎ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԼԻՑԵՆԶԻԱ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Գլխավոր տեղեկություն

Համար	N 273-Ա
Տիպ	Հրաման
Ակտի տիպ	Հիմնական ակտ (30.11.2007-մինչ օրս)
Կարգավիճակ	Գործում է
Սկզբնաղբյուր	ՀՀԳՏ 2007.12.17/33(273) Հատուկ բաժին
Ընդունող մարմին	Գյուղատնտեսության նախարար
Ընդունման ամսաթիվ	29.11.2007
Ստորագրող մարմին	Գյուղատնտեսության նախարար
Ստորագրման ամսաթիվ	29.11.2007
Ուժի մեջ մտնելու ամսաթիվ	30.11.2007

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

29 նոյեմբերի 2007 թվականի N 273-Ա
ք. Երևան

Հ Ր Ա Մ Ա Ն

«ԱԳՐԻՄԱՏԿՈ ԱՐՄԵՆԻԱ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԲՈՒՅՍԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՔԻՄԻԱԿԱՆ ԵՎ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԼԻՑԵՆԶԻԱ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 14-ի N 1902-Ն որոշման դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության լիցենզավորող հանձնաժողովի 2007 թվականի նոյեմբերի 27-ի N 10 եզրակացությունը՝

Հրամայում եմ՝

1. «Ագրիմատկո Արմենիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տալ բույսերի պաշտպանության քիմիական և կենսաբանական միջոցների վաճառքի գործունեություն իրականացնելու լիցենզիա։
2. Աշխատակազմի լիցենզավորման վարչության պետ Տ. Գասպարյանին՝
ա) ապահովել սույն հրամանի 1-ին կետում նշված ընկերությանը լիցենզիայի տրամադրումը,
բ) «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներին համապատասխան՝ եռօրյա ժամկետում սույն հրամանն ուղարկել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ հրապարակման։
3. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել նախարարի տեղակալ Տ. Պետրոսյանին։

Նախարար՝ **Դ. Լոքյան**

Տ Վ Յ Ա Լ Ն Ե Ր

ԲՈՒՅՍԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՔԻՄԻԱԿԱՆ ԵՎ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԻ

Հ/հ	Ֆիզիկական անձ (անուն, ազգանուն), իրավաբանական անձ (անվանումը)	Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	Գտնվելու վայրը	Լիցենզիայի համարը	Լիցենզիա տալու ամսաթիվը	Գործունեության տեսակը	Գործողության ժամկետը	Գրանցման համարը	Գործունեության իրականացման վայրը	Բնակության վայրը	Գործողության ժամկետների երկարաձգումները	Տեղեկություններ գրանցամատյանում լիցենզիայի վերաձևակերպման, նրա գործողության կասեցման, լիցենզիայի գործողության դադարեցման մասին	Այլ տեղեկություններ
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
Նոր տրամադրվող լիցենզիաներ													
1	«Ագրիմատկո Արմենիա» ՍՊԸ	863731	ՀՀ, ք. Երևան, Մառի 18/1, բն.46	N000029	29.11.2007 թ.	Բույսերի պաշտպանության քիմիական և կենսաբանական միջոցների վաճառք	Անժամկետ		ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Նորապատ	----	---	---	---